Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 20 ՄԱՐՏ 1899 — ԹԻՒ 113

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գուշկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

—)(—

Գրութիւնք եւ չեն տրուիր

—)(—

Ծանուցման տողը 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կը շնորհուի։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամ ղրկել

Խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

—

)(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)(

ՍԻՐՈՂ—ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ

—

Ցաճկահայաստանում սով է։

Ե՞տ սովեր է տեսել բազմատանջ հայ ժողովուրդը։

Հայ դպրոցները անկանոն են, ուսուցիչների ահագին մեծամասնութիւնը տիրացուներ ու փթած պատուելիներ են։

Այդ էլ նոր չէ հայի համար։

Հայ հոգեւորականը տգէտ, ծոյլ, մեղկ, ու անբարոյական է։

Ոչ միայն հայ հոգեւորականն է այդպէս, այլ այդպէս են աշխարհիս բոլոր պաշտօնապէս ճանաչուած կրօնների հոգեւոր դասակարգերը, բացի մի քանի անհատական բացառութիւններից։

Հայ գրականութիւնը օր աւուր աւելի ու աւելի է դատարկւում. հները մեռնում են, իսկ նորերը չեն ծնւում։ Նոր ու թարմ ուժերը գնում են «ուրիշ» գործի...

Հայի կարիքները բազմաթիւ են։

Բայց այդ բոլոր անցողական պէտքերի վրայից պարզ ու որոշ կերպով փայլում է մի արմատական ու սպանիչ կարիք։

Դա «ազատութեան» կարիքն է։

Ամէնից առաջ հային հարկաւոր է մի սեփական անկիւն, ուր նա իրեն ազատով զգար, ուր նա զարգացնէր այն լաւութիւնները, ինչ յատուկ է հային, ուր նա ազատ պարզէր իր թեւերը... ուր նա գո՞նէ հանգիստ շունչ առնէր։

* * *

Հասարակական ամէն մի կարիքի բաւարարութիւն տալու համար ծնւում է մի դասակարգ։

Հայի ազատութեան ձգտումն էլ ծնեցրել է հայ յեղափոխական դասակարգը։

Յեղափոխականը ձգտում է քանդել ներկայ տիրող բռնակալ կարգերը և նրա տեղ աւելի մարդավայել կարգեր ստեղծել հայոց երկրում։

Սրանից էլ մաքուր ու վեհ ձգտո՞ւմ,.. Ուրեմն՝ յեղափոխականից էլ աւելի բարձր ու ազնիւ մա՞րդ...

Բայց «չկայ վարդ առանց փուշի»։

Յեղափոխական վարդ. դասակարգն էլ ունի իր բազմաթիւ փշերը։

Այդ փշերը զանազանագոյն ու բազմատեսակ են։

Մի քանիսը պարզ ու լկտի խաչագողներ են։

Դրանք վտանգաւոր չեն. խիստ շուտով է բացւում դրանց դոյնը և շուտով էլ ամէն մարդ զգուշանում է դրանցից։

Միւսները դրամի, ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար որսի ելած գայլեր են։

Սրանք էլ այնքան վտանգաւոր չեն։ Մի տեղ մի քիչ յեղափոխական դրամ են իւրացնում, միւս տեղ ղեղծումներ գործում և նոյն իսկ երբեմն փողի համար մահնութեան դիմում։ Բայց ինչ էլ որ լինի՝ սրանց նորից կարելի է հարուածել, դիմակազուրկ անել ու ազատել։

Այդ երկու տեսակի ստոր տիպերն էլ չեն կարող մանրացնել, անբարոյականացնել ու քայքայել մի ամբողջ յեղափոխական կուսակցութիւն։ Նրանց ներսը գլխաւորապէս նիւթական ու ժամանակաւոր է լինում։

Ամենավտանգաւոր տեսակ փուշը «սիրող բռնակալ» յեղափոխականն է։

* * *

Այս տեսակը բազմաթիւ է։

Ամէն տեղ, բոլոր կուսակցութիւնների մէջ վխտում են նրանք։

Սիրող-յեղափոխականը երկար տարիներ չափազանց մեծ եռանդով խօսում, դատում, քննում է մեր ազգային փրկութեան գործը։

Նա գործ էլ է կատարում. պրոպագանդ է անում, դրամ ժողովում, խմբագիր դառնում և երբեմն նոյն իսկ որոշ զրկանքներ կրում, բանտ, աքսոր քաշում... Բայց այս ամէնը մի պայմանով. այդ բոլորը կանէ ո՛չ Թուրքիայում, ոչ կուի իսկական ասպարիզում, այլ Ռուսիայում, Բուլղարիայում, Եգիպտոսում.... ո՛ւր կուզէք՝ միայն Ցաճկաստանից դուրս։

Նրանցից շատերը յեղափոխականի բոլոր յատկութիւններն ունին ըստ երեւոյթին... բայց... վախենում են նրանք մահից, սատի՛կ վախենում։

Անձնազոհութիւնը, որ կազմում է յեղափոխականի ընորոշ ու անհրաժեշտ յատկութիւնը՝ բոլորովին բացակայում է նրանցում։

Մահուան այդ ծայրայեղ երկիւղը, անձնազոհութեան բացարձակ բացակայութիւնն արգիլում է նրանց ստ դնել կուի իսկական ասպարէզը։

Եւ մնում է «սիրողը» դրսում, կրելով իր վրայ «յեղափոխական» պատուաւոր տիտղոսը...

* * *

Երկա՞ր տարիներ խօսելով ու գրելով միեւնոյն հարցերի մասին, «սիրողը» ձեռք է բերում խօսելու բաւական խոշոր կարողութիւն և դրանով ազդում շատ կարճամիտների վրայ։

Անգոյն ու փոքրուղեղ գործիքներով շրջապատուած՝ նա զբաւում է մի զօրեղ դիրք իր եղած կուսակցութեան մէջ և դառնում կատարեալ բռնակալ մի ժէնէրալ, որ շարժում է անհատներին, քշում նրանց այս ու այն կողմ, առանց ծանօթ լինելու ղրկուելիք վայրի ներկայ պայմաններին։ Իսկ ինքը մնում է իր համեմատաբար ազատ ու տաք անկիւնում...

Խորամանկ է նա, խի՞ստ խորամանկ։

Երբ տեսնում է, որ իր «անձնազոհութեան» վրայ թեթեւ կասկածներ են սկսում երեւալ, զանազան ազուէսութիւններով նա իսկոյն գնում է իր թեկնածութիւնը գնալու կուի դաշտը... համոզուած, որ փոքրուղեղ գործիքները կամ վիճակակից ընկերները համաձայնութիւն չեն տալ, համարելով նրան անհրաժեշտ իր եղած վայրի համար։

Եթէ որ և է իսկական յեղափոխական ըմբռնում է այդ սիրողների ոգին և աշխատում դնել նրանց միայն «օժանդակող» ուժերի շարքում՝ վրդովւում են նրանք, ասպարէզ հանում իրենց բոլոր գործիքներին և խաչակրաց արշաւանք սկսում այդ անկեղծ անձի դէմ։

Նրանց ժէնէրալական զզուելի դիրքը փախցնում է շատ անկեղծ օժանդակ ուժեր գործի ասպարէզից։ Շատ անկեղծ յեղափոխականներ, ժամանակ ու հնար չունենալով կուելու նրանց դէմ, հեռացնել նրանց զեկավար մարմինների միջից՝ զինաթափ են լինում, լքանում ու, վերջապէս՝ ասպարէզից քաշւում...

Նրանց ներկայութիւնը մանրացնում, թուլացնում ու անբարոյականացնում է յեղափոխական վեհ գործը։

Շատ ձեռնարկներ փչանում են, շատ անձեր գործից քաշւում, շատերն էլ զոհ են գնում...

Ի՞նչ անենք, չէ՞ որ նրանք «յեղափոխական» են և... «խելացի» մարդ։

* * *

Ուրիշները թող գործեն, մենք փառքը վայելենք—ահա՛ նրանց սկզբունքը։

Նրանք ուզում են անպատճառ երիտասարդութեան զեկավարներ հանդիսանալ, շահագործել ներկայի առաջատար ձգտումները, շարժումների ու մտքերի գլուխ անցնել...

Կարճ՝ դրանք պատի մակաբոյծներ են, որ ի հաշիւ ուրիշների դիրք, պատիւ ու փառք են ձեռք բերում։

Անկեղծ ու անձնազոհ յեղափոխականների պարտքն է դնել այդ սիրողներին հասարակ օժանդակիչների դիրքում և թոյլ չտալ մտնելու յեղափոխական գործի զեկավար մարմինների մէջ։

Դրանք ա՛յդ դերերում գործեր ու կուսակցութիւններ կը քայքայեն, սրբազան գործը տեղի ու պաշտօնի ասպարէզ կը դարձնեն։

ԳԱՍՊԱՐ

——).(——

ԲԵՄԻ ՇՈՒՐՋԸ

Թատրոնի կարեւորութիւնն ու օգտակարութիւնը նոր չի չտուած չէ՛։ Ամէն լուսամիտ անձ շատ լաւ գիտէ թէ բեմը որքան կրնայ ազնուացնել զգացումները, կրթել միտքը և զարգացնել գեղարուեստի ճաշակը։ Յօդուածիս ծաւալը չի ներեր միառմի յիշել հոս թէ՛ քաղաքակիրթ ազգերը որքան զոհողութիւններ կընեն և որքան աշխատութիւն կը նուիրեն թատրոնը զարգացնելու, ճոխացնելու համար։

Նպատակս է հակիրճ կերպով պատկերացնել հոս Պուլկարահայերուս թատերասիրական մակարդակը։

Ցաւօք սրտի պէտք է խոստովանիլ որ մենք մինչեւ այժմ ունեցած չենք գեղարուեստի սիրահարներու համակրելի խումբ մը, թատրոնի նուիրուած կարող արուեստագէտներ, որոնց նպատակը ըլլար պարբերական, բայց կարելւոյն ճոխ ներկայացումներով ստեղծել յատուկ բեմ մը, ուր ներկայացուէին ազգային պատմական կամ ժամանակակից ողբերգութիւններ, ուր փայլէին հերոսներու անձնուիրութիւնները, գաղափարականներու անհաշտ կռիւը, հայրենիքի և մարդկութեան նուիրուած. վերջապէս կենդանի կերպով հարուածուէին մեր հասարակութեան վատ կողմերը։ Մեզ համար այդ անհրաժեշտ է, քանի որ հայրենիքէն հեռու, այլազան վտանգներու ենթակայ, պէտք ունինք այնպիսի ազդակներու, որոնք միշտ յիշեցնէին մեզ մեր անցեալը, մեր նախահարց կեանքը, գործունէութիւնը, անոնց վսեմ ու նսեմ կողմերը, վերջապէս ա՛յն, ինչ որ մեզ պէտք է կապէ մեր ամբողջութեանը հետ։ Այո՛, այս միջոցներով միայն կարող ենք որոշ ազգային դիրք մը պահել օտարութեան մէջ, ու ազգային, հայրենի յիշատակներու սէրը վառ պահել մեր սրտերու մէջ։

Թերեւս ոմանք ըսեն թէ ժողովուրդը չի քաջալերեր մեր դերասանները։ Բայց այդ առարկութիւնը շատ ընդհանուր է։ Մեր զգացումները բթացած չեն, մենք կոշտ ու կոպիտ մարդիկներ չենք։ Չէ կարելի հանրութեան բարդել յանցանքը, երբ անոր ճաշակին գոհացում տուող չկայ։ Երեք, չորս տարուան մէջ հազիւ մէկ կամ երկու դերասանական խումբեր ունեցանք, որոնք ասուպներու նման կարճատեւ գոյութենէ յետոյ մարեցան, մի քանի կանոնաւոր ներկայացումներ տալէ վերջը։ Ու անկէ յետոյ շնորհքով խումբ մը չունեցանք Պուլկարահայոցս աղքատիկ բեմին վրայ։

Հետեւեալ պարագաները կըրնան ցոյց տալ թէ մեր ժողովուրդը քիչ թէ շատ գիտէ յարգել արժանաւորները։

Անցեալ ամառ տեղւոյս ազգային վարժարանի ուսանողները ներկայացում մը տուին Դուրեանի ողբերգութիւններէն մէկը։ Որքան որ խաղի նիւթը դժուար էր և դերակատարները անփորձ ու մատաղ, սակայն եռանդուն պատանիները մեծ յաջողութիւն ցոյց տուին։ Թատրոնի պարտէզը ասեղ ձգելու տեղ չկար, իւրաքանչիւր արարուածի վերջանալուն հանդիսականները որոտընդոստ ծափահարութիւններ և կեցցէներ կը շռայլէին։ Մեծ գոհունակութեամբ մեկնեցան անոնք։ Քանի մը շաբաթ առաջ ալ քաղաքիս հայ երիտասարդութիւնը «Արշակ Բ.ը» ներկայացուց ի նպաստ տեղւոյս ընթերցարանին։

Նոյն բազմութիւնն ու նոյն ոգեւորութիւնը։ Խրախոյսներ, կեցցէներ անպակասէին։ Խաղը յաջող էր. ժողովուրդը շատ գոհ մնաց։

Ասոնք կարծեմ կրնան փոքր գաղափար մը տալ մեր հասարակութեան ձգտումները ներկայացնող դէպքերու մասին։ Ու դեռ պնդել թէ ժողովուրդը անտարբեր է, չքաջալերեր եայլն, այդ պարզապէս թիւրիմացութիւն է։ Ցանկալի է որ մեր լրագիրները աչքէ չվրիպեցնեն թատրոնական գործերն ալ։

Կը լսեմ թէ վարժարանի աշակերտները կը պատրաստուին մօտ ատեններս խաղալու «Երուանդ Բ.» ողբերգութիւնը, որ արդէն դիւրացուցած են բարեկենդանի արձակուրդներէն օգտուելով։ Այս իրենց երկրորդ ներկայացումը պիտի ըլլայ։ Ժողովուրդը մեծ համակրութեամբ պիտի ողջունէ այս ձեռնարկը, վասն զի դեռ թարմ է առաջին խաղի տպաւորութիւնը իր յիշողութեան մէջ և կը յուսայ որ այս ա՛լ աւելի յաջող պիտի անցնի, քանի որ գործող անձինքը քիչ շատ փորձառութիւն ալ ունեցան իրենց զգալի զարգացման հետ միատեղ։

Ապրի՛ն այսպիսի ձեռներէցները, որոնք իրենց պարապոյ ժամերը օգտակար ըլլալու տենչանքով կը մաշին։ (*)

Տիգրան Երուանդեան

Ռուսճուգ, 6 մարտ 99

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղէքսանդրիա, 25 Մարտ

Անցեալ հինգշաբթի՛ Վարդանանց տօնին օրը, պատարագի աւարտումէն ետքը՛ եկեղեցւոյն մէջ դպրոցական հանդէս մը ներկայ գտնուեցանք ստուար բազմութեան մը հետ։ Շնորհալիի «Նորահրաշ»էն սկսելով՛ երկսեռ աշակերտները երգեցին ազգային զանազան երգեր, տաղնեակ արտասանութիւններով ընդմիջուած։

Միակ բանախօսն էր անգլիերէնի ուսուցիչ Պ. Եսայեան, որ թէ և քիչ մը ռամիկ և անկանոն հայերէնով՛ բաւական ազդու յորդորներ մակածեց օրուան հերոսներուն յիշատակէն, բնաբան ընտրելով՛ Եգիպտական ջրերուն վրայ Նափոլէոնը սանձահարող Անգլիացի Նէլսըն ծովակալին արձանագիրը. «Անգլիան կը պահանջէ որ իւրաքանչիւր անգլիացի իր պարտքը կատարէ» և ... Հայաստանը կը պահանջէ որ իւրաքանչիւր հայ իր պարտքը հատուցանէ»։

—Նոր չէ որ այդ պահանջը մեզի կ'ուղղարարուի և Աւարայրի նահատակներէն ի վեր չէ՞ հա-

(*) Միայն թէ այդ ներկայացումները արգելք չի դառնային ուսանողներու զարգացմանը. ինչ որ անխուսափելի կը կարծենք։ Աւելի լաւ է որ դպրոցաւարտ երիտասարդները շարունակեն այդ գործը։

Ծ. Խ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԶՕ

Փոթորկալի, անձրեւոտ գիշերին յաջորդեց մայիսեան հրաշալի առաւօտը։ Մշուշը եւ գոլորշին չեն դիմանում ժիր զեփիւռին. ցրւում տարտղնվում են։ Ահա կամաց կամաց երեւաց եւ Արագածի ձիւնապատ կատարը։ Նա ողջունում է երկու Մասիսներին, իր շողշողուն գագաթով ժպտում Արարատեան գինեւէտ դաշտին եւ ջրաւէտ ու կանաչ արտերով ծածկված Ապարանին։ Հայաստանի այդ սիրուն սարը, վիթխարի կուրծքը ծածկած բազմազան եւ անուշաբոյր ծաղիկներով, լւացվում է իր սրտի խորքից ժայթքող վճիտ առուակների պաղ ու յստակ ջրով։ Արեւի վարդագոյն ճառագայթները գրգվում են սիրուն Արագածի հետ, խաղում նրա փափկուն կատարի, գոյնզգոյն ծաղիկների եւ կարկաչուն ջրերի հետ։ Արեւը չէ կշտանում այդ հրաշալի սարից, կարծես թէ դանդաղում է, եւ ո՞ւր գնայ, այս վայրկեանին Արագածի կրծքից սիրուն տեղ ո՞ւր կը գտնի...

Բացի արեւից, Արագածի հրաշալիքները այդ րոպէին վայելում են ոչխարները, մի քանի հարիւրներով ցրված այս ու այն կողմ, ախորժակով ճաշակում են լեռնային հիւթեղ խոտը։ Երեւում է որ շատ անօթի են, երեկվայ անձրեւը, փոթորիկը, նրանց ստիպել էր ժամանակից առաջ հրաժարվել կերակրից. այդ բաւական չէ, սարսափ էր ազդել, ցամքեցրել ամեն մի ախորժակ։ Այժմ գոհ եւ ուրախ են նրանք, փոթորկի վախ չը կայ. գայլից էլ չեն վախենում. կատաղի զամբռ գայլխեղդները, երկաթէ ժանիքաւոր կրծկալներ հագած, ամենազգոյշ եւ ուշիմ ժամապահ զինուորի նման, անկիւններից հսկում են, կազմ ու պատրաստ պատառելու իրանց ցեղակից գայլերին, եթէ սրանք համարձակվեն իրանց անօթի փորը կշտացնելու համար թմբլիկ ոչխարներից մէկը փախցնելու...

Բացի զամբռներից, մի քիչ հեռուն, լերկ եւ խոշոր քարի վրա նստած է հովիւը, քուրդ Հասօն, մօտ 25 տարեկան, առոյգ, հրացայտ աչքերով, միջակ հասակով, մի երիտասարդ։ Բայց նա հիմա այնքան էլ չի մտածում ոչխարների վրա. խօսեցնում է իր սրինգը, անուշ, երբեմն տխուր, երբեմն շատ զուարթ գեղգեղով։ Ի՞նչ է ասում Հասօն, ո՞ւմ հետ է խօսում, ինչո՞ւ է մրմնջում, ինչո՞ւ է ուրախանում. այդ նրա սրտի գաղտնիքն է։ Բայց աշխարհի երեսին ամեն մի գաղտնիք պարզվում է, յաճախ անհատի կամքին բոլորովին հակառակ։

* * *

Ոչխարները արածում են, շները հսկում են, զեփիւռը շնկշնգում Արագածի ձորի մէջ, Հասօն իր սրինգով սիրտը մխիթարում, իսկ սարի լանջով, այծեամի արագութեամբ, սեւ սեւ երկար ծամերը քամուն տուած, մի աման ձեռքին բռնած, վերեւ է բարձրանում Նազօն՝ Ծաղօ աղաի մատաղ աղջիկը, ամբողջ քիւրդ ամարանոցի գեղեցկուհին. եւ որչափ մօտենում է սրնգի ձայնին, այնքան կարմրում է, աչքերը բոցավառվում են, քայլերը արագանում են։ Նա քաղում է պատահած սիրուն ծաղիկը եւ խրում իր մազերի մէջ. հետզհետէ գլուխը պսակւորվում է, եւ քրդուհին կերպարանափոխվում, դառնում լեռնային հրապուրիչ, դիւթիչ մի յաւերժահարս...

Վերջապէս նա այնքան բարձրացաւ որ Հասօն նկատեց, սրինգը կարծես նոր ոգի առաւ, լեզուն բացվեց, սկսեց շնկշնգալ, ճլվլալ, բոլորովին սոխակի նման. Նա ողջունում է սէրը, նոր եւ թարմ կեանքը, բնութեան գրկում, ծաղիկների մէջ, պայծառ երկնքի տակ՝ զեփիւռին ներդաշնակ եղանակով։

Նազօն սկսեց վազել, մի քանի վայրկեանից արդէն Հասօի առջեւ կանգնեց, ամանը վար դրեց, բոլոր ժողոված ծաղիկները թափեց երիտասարդի գլխին, կրծքին, վերջապէս նստեց նրա կողքին, շատ մօտիկ եւ, ձեռքը քնքշաբար Հասօի խրելով սեւ սաթի նման խոպոպիկների մէջ՝ ասեց.

—Ի՛նչ լաւ սրինգ ես նւագում Հասօ, ի՛նչ հրաշալի եղանակ էր, կարծես սրտիս հետ էր խօսում, իմ մտքերի եւ զգացմունքների արձագանքը լինէր։

Հասօն սրինգը վար դրեց, փարեց գեղեցկուհու վզովը, մի համբոյր խլեց նրանից եւ պատասխանեց.

—Սիրտս վկայում էր, որ այսօր դու պէտք է կերակուր բերես, սրինգովս քեզ հետ էի խօսում, միտքս քեզ հետ էր։ Ճիշդ, ինչպէս եղաւ, որ դու բերիր հացը։

—Ինչպէս, ուզում էին մեծ հարսի հետ ուղարկել, բայց ես ամեն միջոց, խորամանկութիւն գործ դրի որ ինձ ուղարկեն։ Ինչպէս կարող էի դիմանալ որ այս հրաշալի առաւօտը դու ուրիշի երեսը տեսնէիր, ուրիշի բերած հացը ուտէիր։ Տես, որչափ սիրուն է Արագածը, մեր առջեւը թաւշանման կանաչ խալի,

յեր ինկան պարտքերնին հատուցանելով իրենց Մայր-Հայաստանին, բայց ան իր ծոցէն վիժած հայ վաշխառուներուն պէս կարծես անգութ ու անկուշտ կը շարունակէ պահանջել հարիւրաւոր պորտերէն մեր վրայ բարդուած տոկոսները՝ առանց գէթ հաշիւ մը ցուցնելու: Իսկ մենք ալ սնանկացանք, սպառեցանք, է՛հ ալ հերիք...

Տարբեր տրամաբանութիւն մը չեմ գտներ մեկնելու այն օրուան հանդէսին մարած, յուրտ տպաւորութիւնը, որ ճշգրիտ արտայայտութիւնն էր առհասարակ մեր ժողովուրդին արդի տրամադրութեանը: Վարդանա՜նց տօն. տարիներ առաջ հայրենիքին մէջ զգացուած լռութեամբ մը անցնող այդ օրը ինչե՜ր չէր ներշնչեր մեզի. օրացոյցի մէջ պզտիկ խաչի մը քով սեղմուած սա պարզ տողերուն իսկ ընթերցումով. «Ս. Վարդանանց զօրավարացն և 1036 վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին», և ի՛նչ կատաղի տենչով կը յիշէինք, ա՜հ, ատեն մը Թուրքին դեռ քունի տարիներուն՝ այդ օրը կատարուած փառաւոր հանդէսներն ու ներկայացումները, որոնց զարդն ու սարքը հիմա մոխիր դարձած են կամ Թաքստոցներու փոշիին մէջ կը փտին:

Իսկ հիմա թէև վտարանդի և օտար, բայց ազատ ասպնջական երկիրներու մէջ, մեր ազգային այն անուշ յիշատակի օրերը կանցնին անտարբեր լքումով կամ անհրապոյր հաւաքումի մը ցրտութեան մէջ: Սերունդ մը իսկ դեռ չփոխուած՝ նկարագրի որչա՜փ անակնկալ փոփոխութիւն, որ տարօրինակ հակասութեամբ մը կը յայտնուի աւելի արտասահմանի մէջ, այն հայերուն վրայ, որոնք դահիճին սուրէն ու չղթայէն մազապուր՝ գէթ ապահով անկիւն մը գտած են՝ չգիտեմ... Մահուան սարսուռներուն յաջորդող կեանքի վայելքին հրապուրիչ միջավայրն է, որ թմրեցուց եռանդն ու անձնուրացութեան ոգին, երկարատեւ ապարդիւն զրկանքներու ինքնահաստատումին բնազդը զարթեցնելով: Թէ՞ մեր աչքերուն տակ կատարուած ա՜յնքան սխրագործութիւնները նսեմացուցին հին մեծութիւններու փայլը: Բայց եղու՞կ, նորերն ալ մեծ յարգանք մը չեն վայելեր ու վաղանցուկ պաշտամունք մը եղաւ խոլ երազի մը պէս անոնց վերյիշումը սկեպտիկ ծիծաղ մը կը ձեւէ շրթունքներուն վրայ, յաճախ անոնց իսկ, որ երկիւղած հիացողները եղած էին այն սրտառուչ յափշտակութեան գործերուն: Եւ թարմ տպաւորութիւններու այս այլասերումը չէ՞, որ յետադարձ վարակումով կեղծէ հնութեան դէմքերուն լուսապսակները: Վերջապէս բուռն ցնցումներու, չափազանց և փոփոխական յուզումներու ազդեցութեան տակ հայուն ջիղերը՝ ա՛լ թուլցած զգալէ, կզուած, ձանձրացած, ընկճուած դէպքերէն, ան կարծես կորսնցուցած է Արդարութեան յաղթանակին եթէ ոչ յոյսը՝ գէթ զայն պահելու վճռականութիւնը: Ու մարդ անհուն վիշտով մը կը դիտէ այսպէս շուտ քայքայումը մեր հաւատքի ու զգացումի աշխարհին, ուր ա՛յնքան խանդով մխրճեցանք յեղափոխական անմեղութեան օդերուն մէջ, լացունող յիշատակներ ու յաւէտ պանծալի դէմքեր թողնելով հոն...

Սեւատեսներ, հանրային գիտակցութեան մը զարթնումին նշանները կը համարուի այս պաղութիւնը. սպասենք. բայց գեղեցիկ իտէալներու փլատակներուն վրայ նշմարուած այդ գիտակցութիւնը երբ պիտի յայտնուի, ե՞րբ պէտքերը այնչափ ստիպողական են և խեղճ Հայաստանին ձայնն ալ կըսկսի մարիլ մեզի մեր պարտքը յիշեցնելէ...

ԿԱՐԻՃ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Կը խնդրուի խմբագրութեանս իմացնել թէ ո՞ւր կը գտնուի Նազարէթ Կէնճօեան, 22–23 տարեկան երիտասարդը:

—Սիլիստրէ. — Պ. Դանակ. — Ձեր յօդուածը տպագրելու համար, պէտք է իմացնէք մեզ ձեր իսկական անունը եւ հասցէն:

Անոնք որ Թերթիս համար Թղթակցութիւն եւ կամ յօդուած կը ղրկեն, թող բարեհաճին իրենց իսկական անունը, մականունն ու հասցէն իմացնել մեզ, ասի լրագրական ամենակարեւոր օրէնքներէն մէկն է, հակառակ պարագային չեն տպագրուիր, որչափ ալ արժանիք ունենան:

—Անոնք որ կը փափաքին Շարժումին թիւ 1էն ունենալ, կը յայտնենք որ Ա. տարիին համար պէտք է կանխիկ մեզ ղրկեն 15 ֆրանք, իսկ հատով մէկ թիւը 20 սանթիմ:

ՔՐՈՆԻԿ

—

Եւրոպական հիւպատոսներէն մէկը պտըտելով Վանի Կարճկան և Գաւաշ գաւառները, այսպէս կը գրէ տիրող սովի մասին. "շատերը շաբաթներով առանց հացի մնացած են, և ես աչքովս տեսայ որ ասոնք ստիպուած էին կարկանդակներ պատրաստել խոտերէ և առոյտի հատիկներէ: Այդ հացէն կտոր մը բերած են կուսակալին որ զզուանքով նետած է այդ զարշելի կերակուրը": Հիւպատոսը կը շարունակէ "այս տողերը գրած միջոցին իմացայ որ, 7 ընտանիք երիկ մարդ. կնիկ մարդ և երեխաներ սարսափելի յուսահատութենէ մղուած ընդունած են իսլամութիւնը: Սովի ենթարկուած Վան հետզհետէ կը լեցուի կիներով, աղջիկներով, որոնք ապրուստի միջոցներէ բոլորովին զուրկ, իրենց պատիւը կը ծախեն առաջին հանդիպողին. քաղաքին Թուրքերուն, չինուորներուն, մէկ խօսքով կտոր մը հաց տուողին: Պէտք է աշխատիլ որ մնացածները չիյնան անբարոյականութեան գիրկը. մահը առատօրէն կը հնձէ աղքատները":

—Սալմաստի գաղթականներուն օգնող մասնախումբը հազիւ կրցեր է 3500 ղրուշի չափ օգնութիւն հասցնել հոն ապաստանած մօտ 2000 Աղբակեցի, Ճուլամէրկցի եւայլն գաղթականներուն: 100 րուպլիի չափ ալ ղրկուած է Ուրմիոյ մէջ գտնուածներուն:

Այդ օգնութիւնը շատ չնչին էր, կ'ըսէ Մշակի Թղթակիցը, որ այս տեղեկութիւնը կուտայ, և եթէ տեղական ժողովուրդը եղբայրաբար չօգնէր, շատերը սովամահ պիտի ըլլային: Ձմեռը անցած է, սակայն օգնութեան պէտքը ալ աւելի զգալի է, մանաւանդ որ քրդերն ու Թուրքերը գրաւած են այդ Թշուառ-

---

պէս պէս ծաղիկներով զարդարված, երկնքում ոսկու պէս փայլող, բայց ոչ այրող արեգակ, չորս կողմում անուշ բուրմունք, սիրուն թռչնիկներ, պայծառ, արծաթաշող առուակներ. մի խօսքով կատարեալ դրախտ եւ մարդ չը կայ, միայն ես ու դու ենք, բոլորովին երջանիկ: Ճշմարիտ, Հասօ, որչափ մեծ է Աստուած, այս բոլորը Նա է ստեղծել: Ինչ սիրուն է գարունը, ձմեռը լաւ չէ, այն ժամանակ կարծես ամեն բան մեռնում է, մարդն էլ ստիպված է միշտ տան մէջ մնալ, այս բոլոր հրաշալիքներից զուրկ.

—Այո. Նազօ ջան, Աստուած շատ մեծ է եւ շատ հնարագէտ, մանաւանդ որ քեզ նման մի հրաշալի աղջիկ է ստեղծել: Երբ դու չը կայիր, այսինքն ինձ չէիր սիրում, ես քեզ չէի հանդիպել, ես կրկին հովիւ էի. Արագածի վրայ. նոյն սիրուն ծաղիկները, նոյն բոցավառ արեւը, նոյն հրաշալի երկինքը տեսնում էի, ուրախանում եւ հրճվում նրանցով. բայց երբեմն շատ էի նեղվում, սիրտս ցաւում էր, տանջվում եւ ամեն բան կորցնում էր իր հրապուրանքը: Այսօր բոլորովին ուրիշ է. դու կաս; աշխարհը աւելի սիրուն է, եւ Աստուած ինձ համար աւելի մեծ: Թէ ինչո՞ւ է այդպէս, խելքս չի հասնում, չեմ հասկանում:

—Էհ, Հասօ, հեգնելով ընդհատեց Նազօն, եթէ քո խելքը չի հասնում, իմը բոլորովին չի հասնի, չէ որ դուք, տղամարդիկդ ասում էք թէ «կանանց մազերը երկար են, խելքերը կարճ»: Էհ, ի՞նչ եմ երկարացնում, մոռացել եմ որ դու անօթի ես, հացդ կեր, ես էլ գնամ մի քիչ Բալօին չոյեմ. նա իմ մեծացրածն է եւ ամենից քաջ գայլխեղդը:

Նազօն խօսքը վերջացրեց եւ տեղիցը վեր ցատկելով վազեց դէպի ոչխարները: Հասօն մի քանի վայրկեան իր ուրախ բայց չլարված նայւածքը ուղղեց դէպի Նազօն. վերջը կամաց կամաց բացեց ծածկված ամանը, ուր գտնվում էր թանապուր, վերցրեց թաժա, բայց շատ սեւ հացը սկսեց ուտել եւ մտածել.

—Չէ, Նազօ, դու շատ խելացի ես, թէեւ ես այր մարդ եմ, իմ մազերս էլ քոնից կարճ են, բայց եւ այնպէս չեմ կարող ասել, որ քո խելքը իմից պակաս է: Ճշմարիտ. ի՞նչու են այդպէս ասել, ինչո՞ւ պէտք է կնոջ խելքը այր մարդու խելքից պակաս լինի. երկուսին էլ Աստուած է ստեղծել: Գոնէ Նազօն, ինձնից խելացի է. եթէ միայն ինձ մնար, ես երբեք չը պէտք է կարողանայի նրան իմ սէրը հասկացնել: Բայց սրա վերջը ինչ է լինելո՞ւ: Շատ էլ իրար հասկացել ենք: Էհ, ինչ եմ վերջի մասին մտածում, չէ որ հիմա երջանիկ եմ:

Դեռ Հասօն ինքնիրան շատ խօսեց, շատ մտածեց այդ վերջի մասին, բայց երբ տեսաւ որ միջիցը չէ դուրս գալիս, հարցը հետզհետէ դժուարանում է՝ մի տեսակ յուսահատութեան մէջ ընկաւ եւ սկսեց աւելի դանդաղ կերպով ուտել կերակուրը:

Մինչ Հասօն այդ տարտամ հոգեկան վիճակումն էր, Նազօն իր այցելութիւնները վերջացրել էր եւ գալիս էր նրա մօտ. երբ նկատեց որ Հասօն գլուխը կախ արած սուզվել է իր մտքերի մէջ, ճամբան փոխեց եւ առանց չչուկ հանելու, եկաւ երիտասարդի ետեւի կողմից ու կանգնեց նրա գլխի վերեւում: Մի քանի վայրկեան այդպէս լուռ ու մունջ մնալուց յետոյ՝ գրեթէ դժգոհ կերպով ասեց.

—Էհ. անշնորհք, դեռ ճաշդ էլ չես կերել. էլ ի՞նչի մասին էիր մտածում, անշուշտ մեր երջանկութեան:

—Հա, Նազօ. դու ինձնից խելացի ես, ճիշդն ասա, եթէ ես քո հօր հովիւը չը լինէի, ես էլ իմ վրանը եւ ոչխարները ունենայի, հայրդ բոլորովին չէր հակառակի, այնպէս չէ:

—Ի հարկէ. ուրեմն դու էլ աշխատիր քո վրանը եւ ոչխարները ունենաս, որ ես էլ կարողանամ ազատ համարձակ հօրս յայտնել որ քեզ սիրում եմ եւ բացի քեզնից ուրիշին չեմ առնի: Ինձ համար միեւնոյն է. ես քեզ առանց ոչխարի եւ վրանի էլ կը սիրեմ եւ սիրում եմ, բայց արի տես որ հայրս ասում է թէ ես իմ չոբանին աղջիկ չեմ տայ,

—Էհ, Աստուած, բացականչեց, Հասօն, դու ամեն բան լաւ ես ստեղծել, բայց լաւ չես արել որ մէկին հարուստ ես ստեղծել, միւսին աղքատ:

—Աստծու հետ ի՞նչ գործ ունես, խենթ, գրեթէ բարկանալով ընդհատեց Նազօն, դու քո գործդ տես, Նա էլ քեզ կօգնի: Դէ մնաս բարով, շատ ուշացայ, տնեցիք կը կասկածեն:

Եւ Նազօն կատուի արագութեամբ համբուրեց Հասօի ճակատը, ամանը վերցրեց եւ առանց ետ նայելու սկսեց դէպի տուն վազել.

Նազօի խօսքերը գամի պէս ցցվեցին Հասօի ուղեղում եւ նա նայելով իր անհետացող սիրուհու ետեւից, սկսեց կրկնել. «Չէ Աստուած, լաւ չես արել, ինչո՞ւ ես աշխարհի վրա հարստութիւն ստեղծել. ինչո՞ւ թռչունները, ոչխարները առանց հարստութեան կարող են երջանիկ լինել, իսկ մարդը ոչ:

ՎԱՐԴՕ

——)·(——

ներուն տուներն ու հողերը։

—Նախորդ թուով Հայաստանի մէջ տիրող սովի մասին գրելով, թուած էինք այն հայաշատ տեղերը, ուր հանգանակութեան ձեռնարկած են, ինչպէս նաեւ յիշած էինք Ռուսչուքցի երիտասարդներու յայտարարութիւնը։ Կերեւայ թէ այդ հրաւէրը հրատարակողները կը պատկանին եղեր կուսակցութեան մը, թէեւ գրուածքին մէջ մեղադրելի կէտ մը չկար. սակայն հակառակորդ խումբ մը կաճապարէ և Աղգը կը զգուշացնէ։ Կը կարծենք թէ ալ ժամանակն է վերջ մը տալ այսպիսի վէճերու, մանաւանդ այսօր, երբ հայաստանցին պէտք ունի մեր ամբողջին աջակցութեանը. ըլլայ Դաշնակցական, Հնչակեան (հին կամ նոր)... և նոյն իսկ հոմենթական։ Միանանք ամենքս դրամ խրկելու, ասիկ է առաջին և անհրաժեշտ պէտքը։

—Ֆիլիպէէն շարք մը թղթակցութիւններ առած ենք։ Վերջապէս վարդապետի խնդիրը յանգեր է ողբերգութեան։ Վարդապետը եկեղեցի մտնալ ուզեր է յուզարկաւորութեան մը առթիւ, չեն ձգեր, ինքն ալ նղովք կարդացեր է։ Յաջորդ օրը եկեղեցիին մէջը ընդհարուածներ եղեր, վիրաւորուածներ, մատնութիւններ, բանտարկութիւններ...

Այս ցաւալի դէպքերը անշուշտ անպատուաբեր են Ֆիլիպէցիներու, որ կողմին ալ պատկանին։ Մենք զանց կառնենք թղթակցութիւններու հրատարակութիւնը, և կոչում կընենք Ֆիլիպէցիներուն որ նոր Լեհաստանցի Նիկոլի մը համար ամէն արժանապատուութիւն, ամէն զգայում ոտնակոխ չընեն։

—Բեթերսպուրկի լրագիրները կը հաղորդեն որ մարտի 6ին լրացեր է հռչակաւոր ծովանկարիչ Այվազովսքիի բրօֆէսէօրութեան վաթսունհինգամեակը։

—Թիֆլիզի մէջ հրատարակուող «Թատրոն» հանդէսը, որ ինչ ինչ պատճառներով 1896—1898 դադրած էր, անցած տարուան վերջը նորէն արտօնութիւն ստացեր է հրատարակուելու։

—Ատրպատականի առաջնորդ Սահակ եպիսկոպոսի ջանքովը՝ Սալմասի մէջ պիտի հաստատուի երկսեռ որբանոց մը ընդարձակ ծաւալով և գործնական ծրագրով մը։

—Ռուսչուքէն յօդուածագիր մը կը գրէ թէ կարգ մը գաւառացիներ իրենց բան գործ ըրած են եղեր սխալ լուրեր տալ «Իրաւունք»ին օրինակի համար Քէօլէեանի Դանուբի մէջ խղդուելու լուրը։ Եւ. կը խնդրէ Իրաւունքէն որ իր տուած լուրերը «քննութեան բովէ մը անցուին»։

Մեղի համար աւելի դատապարտելի են անոնք որ լրագրապետի մը միամտութենէն օգտուելով այդպիսի խաղ կը խաղան։

—Վերջապէս «Սուրհանդակ»ը եւեան եկաւ։ Սուլթանը՝ անշուշտ հա կցնելու համար թէ սուրէ ու դանակէ չի վախնար, թերթին հրատարակութեան հրաման տրուած է։ «Սուրհանդակ» որ Տիգրան Ճիվէլէկեանի անօրինութեամբ կը հրատարակուի, օրաթերթ մըն է 10 փարանոց։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն մարտ 12ին կը հեռագրեն «Թանին». Հիւսիսային Ալպանները ազգային ընդհանուր ժողով մը կազմեր են Քոսովայի դաշտավայրին մէջ՝ յուսալով իրենց հետ միացնել միջին և հարաւային Ալպաններն ալ և ատով կազմել սեսակ մը դաշնակցութիւն, բացարձակ կերպով նուիրուած Սուլթանի անձին։

—Հայտար-փաշայի նաւամատոյցի կառուցումը տրուեցաւ Փոքր-Ասիոյ Գերմանական երկաթուղոյ ընկերութեան՝ հետեւեալ պայմաններով.

Տաճիկ պետութիւնը չը կրնար ետ դնել նաւամատոյցը 30 տարիէն առաջ։

Իսկ գնման պարագային՝ կառավարութիւնը պարտաւոր է գնել նաեւ Անգորայի երկաթուղոյ գիծը։

ՌՈՒՍԻԱ

Կրթական նախարար Պոկոլեբոֆ, Բեղերսպուրկի համալսարանի վարչութեան խնդրանօք, վերնդուներ է այն 78 ուսանողները, որ վերջին խառնակութիւններու ատեն արտաքսուած էին։ Ասոնցմէ 29 հոգի պէտք է ստանան յանդիմանութիւն մը և 3 օր բանտարկութիւն, իսկ մնացեալները միայն յանդիմանութիւն։

ՖԻԼԻՊՊԷԱՆ, ԿՂԶԻՆԵՐԸ

Տակուբան կղզիին մէջ վերջերս ճամբորդած անցորդ մը կը դրէ հետեւեալը Նիւ-Եորք-Հերալտ թերթին.

Ամբողջ ազգաբնակութիւնը ղէնք առած է և չափազանց մեծ ոգեորութիւն կը ցուցնէ։ Ապրստամբները կը շինեն ղէնքեր ու ռազմամթերքներ, որոնց գլխաւոր պահեստատեղը Պագօլօրն է։ Բոլոր քաղաքները խստիւ պաշարուած են ապստամբներու գնդերով, բացի ծովափնեայ քաղաքներէն, որոնց մէջ քանի մը անձեր թողուած են, որ ամերիկացիներու ներս խուժելու պարագային հրդեհեն ամէն ինչ։

Ֆիլիպպինցիներու այս հերոսական ու երկարատեւ կռիւը Միացեալ Նահանգներու պէս հարուստ ու հզօր պետութեան մը դէմ մեղի կը յիշեցնէ հայերուս յուսահատ ու ողորմելի աղաղակները առաջին իսկ անյաջողութեան պարագային...

ԶԷՆՔՆԿԵՑՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Մաք Քինլէյը յանձնարարեր է զէնքնկեցութեան ժողովին մասնակցելու նշանակուած իր պատուիրակներուն, որ յայտնեն, թէ Միացեալ Նահանգները չեն կարող իրենց առանց ան ալ քիչ զէնքերը նուազեցնել կամ ստորջրեան ականաւոր նաւերը գործածելէ դադրիլ։ Մ. Նահանգները կընդունին միայն միջազգային միջնորդ դատարանի մը ստեղծումը և ոչ զինաթափութիւն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հալլէի համալսարանի ուսանողները ասկէ քանի մը օր առաջ յայտարարութիւնով մը բողոք յայտնեցին կիներու բժշկութեան ուսուցման մէջ ընդունելու դէմ խիստ բաց ու կոպիտ բառերով, ինչպէս վայել է հին տեւտոններու և ներկայ Պիզմարքներու արժանաւոր զաւակներուն։

—Գերմանական բանակի փոխադրութեան պէտքերու համար որոշուած է, ասկէ վերջ օգտուիլ ինքնաշարժ սովորական կառքերով։ Արդէն բաւական մեծ ապըսպրանք մը եղած է այդ տեսակ կառքեր պատրաստելու համար։

—Ժընէվի միջնակարգ դպրոցներէն մէկուն մէջ ուսուցչի քիմիական փորձ ըրած ատենը պայթում կը յառաջանայ և աշակերտներէն մէկը (տեղացի) անմիջապէս կըսպաննուի։

—Ամերիկեան Բարեհեռ

Հայ գրողի ամբողջ գիրքը հազիւ մէկ ֆրանք կը գնահատուի ու ան ալ գնողներ չը գտնուիր, իսկ ամերիկացի գրողներէն ոմանք ամէն մէկ բառին համար մէկ շիլին կըստանան։

Ռուտիարտ Գիբլինկ խիստ մեծ վարձատրութիւն կը ստանար իր գրածներուն համար։ Տեղական լրագիր մը հաշուեր է, որ անոր ամէն մէկ բառը ուղիղ շիլին մը արժէ։ Կարդալով լրագրին մէջ այս լուրը՝ Նոր-Աշխարհի «տէնտիներէն մին փոստայով ղրկեց Գիբլինկի մէկ շիլին և խնդրեց անկէ, որ իր «արձակ գրութեան մէկ նմուշը ղրկէ իրեն»։ Գիբլինկ ընդունեց շիլին, թղթի կտորի մը վրայ գրեց «շնորհակալութիւն» բառը և ուղարկեց կատակաւէր հարուստին։

Ականջը խօսի հայ անօթի գրողներուն։

ԱԶԴ

Հաճի Արթին Մուրատեան, խոհարար, եւրոպական տաճկական կերակուրներ գիտէ պատրաստել։ Հասցէն Պապա Պապաեան սրճարան, քաղաքային պարտէզին դէմը, թիւ 3։

——).(——

ԱԶԴ

Պ. Տիգրան Թիւֆէնկճեան պատիւ ունի ծանուցանել իր յարգոյ յաճախորդներուն, որ այս անգամ Ռուսճուքէն վերադառնալով, Զբօսարան մը բացած է Տ. Պողոս Փափազեանի տան դիմաց, ընկերակցութեամբ կօսքօթին Ավրամօֆի։ Զբօսարանին մէջ կը գտնուին ամէն տեսակ ըմպելիք, իրենց բոլոր պարագաներով Տ. Թիւֆէկճեանի ձեռքով պատրաստուած, եւրոպական ու արեւելեան ճաշակով թարմ կերակուրներ, գիները խիստ աժան։ Մաքուր ու արագ սպասարկութիւն։

4—4

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՑԵՂԱՓԻՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

)(Գին 1 Ֆրանգ)(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը։

ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍԱԹԵՐԹ

57րդ Տարի

Տարեկան գին՝ 10 ֆր. — 4 ռուբլի. — 2 Տոլար։

Հասցէ՝ Ռէտաքսիոն տը լա ռըվիւ Բազմավէպ. Ս. Լազար։

Վընիզ (Իթալի)

ՄԵԼԳԻՍԵԴԵԿ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Պատմութիւն Քրիստոնեական Եկեղեցւոյ

ԿԱԼՍՑ

Տպարան „Անի“ 1898

Գին 3.50 ֆրանք

Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պալենց գրատան և Ֆօքշան (Ռումանիա) Վ. Մամիկոնեանի մօտ։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տէր Ղեւոնդ Ք. Փափազեանի հայերէն—ռումաներէն տարեցոյցը, պատկերազարդ և ճոխ պարունակութեամբ։ Գինն է թղթակազմին 1 ֆր. լաթակազմին 1.50 և փառակազմին 2 ֆր.։

Դիմել հեղինակին, Կալաց։

ՊՕՐՍԱ

Վառնա 20 Mars

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 8.80—9.30 ֆրանք

Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—11.20 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 6.10—6.40 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն, 55—57 լիպրա, 6—6.05

Առապա, 55—60 լիպրա, 6—6.20

Կիւնկէ 15—20 վակօն, 25—30 առապա կէլմէքտէ տիր։

ՏԱՐԸ

Կիւնտէ 1|2 արապա կէլմէքտէ տիր։ 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք

Առապա մուամէլէսի՝ Նաբօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.